



ԿոՄիտաս

Մկրտիչ Ա.Խրիմյան Ամենայն Հայոց Կաթողիկոսին
1895, 25 հուլիսի, Ս. Էջմիածին

Վեհափառ Հօրն

S. S. Մկրտչի Ա.

Սրբազնագոյն Կաթողիկոսին

Ամենայն Հայոց Քահանայապետ սուրբ,

Եօթն ամս անուցուցեալ է իմ 'ի վերայ, յորմէ հետէ ժողովեմ գՀայոց ժողովրդական երգս եւ գպարերգս, գորոց տակաւին կարի սակաւ ինչ է յայտ գեղանակացն, գկագնութեանցն եւ գկնի:

Ժողովրդական եղանակքն Հայոց 'ի պարգութիւն եւ 'ի վեհութիւն իւրեանց գնմանութիւն բերեն գնուագաց շարականաց նախնեաց մերոց սրբոց, յորս արտայայտին կեանք եւ միտք Հայկեան սեռիս. եւ սոքա ցարդ կան թաղկեալ 'ի թագստի եւ 'ի կողմն յուշից եւ յուրուշից յիմաստնոց՝ ի փիլիսոփայից. եւ արդ եւեթ պահեալ կան 'ի գեղջկական հանճարի նախնեաց թարմ եւ անխառն զգացմանց երաժշտութիւն, որ եւ խուն առ խուն և 'ի կորուստ դիմեալ յառաջէ յերեւումն օտար եղանակաց: Եթէ ո՛չ տարածեսցէ զձեռսն, 'ի բարձր բագուկ, յօճուն լինիլ, Հօտապետդ քարշել, հանել 'ի կորստենէն իսպառնալու յանյատութիւն եւ 'ի մոռացօնս դատապարտեսցին:

Բաց յայդմանէ, 'ի ժողովրդական եղանակսն Հայոց իբրեւ գծիր իմն կարմիր նկատեն առընչութիւնք սոցա եղանակաց շարականաց: 'Ի մէն միում յերգսն գեղջկայինսն որպէս զշող ցոլայ բնատուր հանճար Հայաստան ազին, որ եւ կարօտի բագնապիսի ուսումնասիրութեանց:

Ուստի համարձակիմ խնդրել ‘ի համբոյր Սուրբ Աջոյդ Հայրապետիդ, թոյլատրել,
‘ի բան բարձր հրամանի Ձերոյ, ի տպագրել զանգին գանձան, զորս աւանդեալ է
մեզ բազմահարուստ հանճարոյ նախնեաց մերոց սրբացելոց:

Քահանայապետիդ

Ամնախոնարի ծառայ եւ որդի

Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեան